

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի
2010 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 14.00-ին կայացած նիստի

քաղ. Երևան

Մասնակցում էին`

Վ. Դանիելյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ս. Պետրոսյան	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Գրիգորյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար
Յու. Շուքուրյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս
Հ. Մուսայելյան	«Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
Կ. Վարդանյան	«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Գ. Բարսեղյան	«Մայքրոսոֆթ ԱրԷյ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Բալդրյան	«Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Բ. Ենգիբարյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
Հ. Խանջյան	«Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
Հ. Ավոյան	«Սորսիո» ՓԲԸ-ի տնօրեն
Վ. Խաչիկյան	«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի տնօրեն

Հրավիրվածներ`

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ

Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ
Խ. Ավսյան	ՀՀ վարչապետի օգնական
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Ա. Սինանյան	ՀՀ վարչապետի օգնական
Մ. Քուշկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի գլխավոր մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության փորձագետ
Հ. Միրզոյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերական վարչության պետ
Տ. Պետրոսյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ռազմաարդյունաբերական վարչության պետ
Ա. Քուչուկյան	«Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
Դ. Սանդուխյան	«ԱրմենՏել» ՀՀ» ՓԲԸ-ի իրավաբանական տնօրինության տնօրեն «ԱրմենՏել» ՀՀ» ՓԲԸ-ի պետական կարգավորման գծով բաժնի պետ
Ա. Հայրումյան	CAPS ծրագրի տնօրեն
Ա. Ղազարյան	
Ա. Ալեքսանյան	«Արմինկո» ՓԲԸ-ի տնօրեն
Հ. Կասսարջյան	«Այքան Քոմունիքեիշնս» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Հ. Եսայան	«Յուքում» ՍՊԸ-ի տնօրեն
Ռ. Մուրադյան	«Սմարտ-Տելս» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Հ. Ֆարամազյան	«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ն. Նիկողոսյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի պաշտոնակատար
Մ. Հակոբյան	«Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոն» ՀԿ-ի իրավախորհրդատու
Վ. Հովհաննիսյան	«Օրանժ Արմենիա» ծրագրի կոորդինատոր
Ա. Սարգսյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
Ա. Հայրիյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
Ա. Մելիքյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան)

1) Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանը տեղեկացրեց, որ, ՀՀ Նախագահի 2010 թվականի հունիսի 23-ի ՆՀ-168-Ն հրամանագրի համաձայն ՏՏՁԱ խորհրդի կազմը համալրվել է հետևյալ նոր անդամներով՝ «Այբան Քոմունիքեիշնս» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն, «Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն, «Սմարտ-Տեխ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն և «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստերի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան, Դ. Սարգսյան, Վ. Դանիելյան, Կ. Վարդանյան, Տ. Պետրոսյան, Ա. Բաղդրյան, Հ. Խանջյան)

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Դանիելյանը տեղեկացրեց, որ համաձայն ՏՏՁԱ Խորհրդի N 31(1) արձանագրության՝

1) 3.2-րդ կետի՝ ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծվել է Էլեկտրոնային կառավարման խորհուրդ, պատրաստվել են անդրանիկ նիստի օրակարգն ու նյութերը, որոնք տրամադրվել են խորհրդի անդամներին: Առաջիկայում ՀՀ վարչապետի հանձնարարությամբ սպասվում է նիստի գումարումը.

2) 4-րդ կետի բ) ենթակետի՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն հրավիրված շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, ինչպես նաև հանձնարարությամբ առաջարկված անձանց մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության խնդիրների վերաբերյալ: Քննարկման արդյունքում որոշվել է եվրոպական երկրներում կիրառվող «Tracer 7» համակարգը ներդնել Հայաստանի Հանրապետությունում: Այդ համակարգը հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով վերահսկողություն իրականացնել երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման գործընթացների նկատմամբ ԱՄՆ պետդեպարտամենտի հետ տեղի ունեցան քննարկումներ, որի արդյունքում ցանկություն է հայտնվել մասնակցելու այդ

գործընթացին, ինչպես նաև աջակցելու մասնագետների վերապատրաստման հարցում: Գործընթացի ավարտը նախատեսվում է մինչև 2011 թվականի փետրվար ամսվա վերջ:

Տեղեկացրեց նաև, որ ՀՀ կառավարությունը հաստատել է գործարար միջավայրի կողմից դիմումներ ներկայացնելու և պատասխաններ ստանալու գործընթացի ժամանակահատվածը, որը կրճատվել է մինչև 10 օր: Հաստատվել է նաև սերտիֆիկացման ծառայությունների մատուցման արժեքը, ըստ որի՝ այն չպետք է գերազանցի 60000 դրամը:

5-րդ կետի համաձայն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին հանձնարարվել է՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկել ինտերնետ-հասանելիության ծառայություն մատուցելու նպատակով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև թրաֆիկի փոխանակման կանոնակարգման խնդիրը և տալ անհրաժեշտ լուծումներ:

Տեղեկացրեց, որ ստեղծվել է «Արմիքս» հիմնադրամ, որը զբաղվելու է էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև թրաֆիկի փոխանակման ապահովման իրականացմամբ: Ներկայումս առկա է անհրաժեշտություն հիմնադրամին հատկացնելու տարածք Տիգրան Մեծի N 4 շենքում: Որոշում է կայացվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության ենթակայության տակ գտնվող շենքում գտնվող «Գնագոյացման վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում հատկացնել տարածք՝ համակցման սարքավորումները տեղադրելու համար:

3) 6-րդ կետի համաձայն՝ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանին առաջարկվել էր ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել գրավոր առաջարկություններ օրենսդրական նախագծերի քննարկման, հրապարակայնության ապահովման և նոր մեխանիզմների ձևավորման վերաբերյալ, որը հնարավորություն կտա մինչև ՀՀ կառավարության նիստում ներկայացնելը նախապես ծանոթալ փաստաթղթերի հետ և ներկայացնել կարծիքներ:

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանի կողմից առաջարկվեց, որպեսզի ՀՀ նախարարությունների կողմից ուղարկվող իրավական ակտերը տեղադրվեն ՀՀ արդարադատության նախարարության կայքէջում, որը հնարավորություն կտա նախօրոք ծանոթանալ փաստաթղթին և ներկայացնել կարծիք:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված հանձնարարականների կատարման հաշվետվությունները:

3. Նոյեմբերի 5-8-ը ԱՄՆ-ի Սան Հոսե քաղաքում կայացած «Արմթեք 09» համաժողովի արդյունքների մասին

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան, Ա. Քուչուկյան)

2.2-րդ կետի համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարվել էր

ներկայացնել 2009 թվականի նոյեմբերի 5-8-ը ԱՄՆ-ի Սան Հոսե քաղաքում կայացած «Արմթեք 09» համաժողովի արդյունքների մասին գրավոր հաշվետվություն և հիմնավորված եզրակացություն: Պարոն Ա. Քուչուկյանը առաջարկեց հարցի քննարկում չկազմակերպել և ընդունել ի գիտություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը ներկայացրել է հանգամանալից տեղեկատվություն:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված՝ 2009 թվականի նոյեմբերի 5-8-ը ԱՄՆ-ի Սան Հոսե քաղաքում կայացած «Արմթեք 09» համաժողովի արդյունքների մասին գրավոր հաշվետվությունը:

4. Հաջորդ սերնդի լայնաշերտ ցանցի (National broadband) նախագծման և կառուցման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան, Կ. Վարդանյան, Ա. Քուչուկյան, Ա. Ալեքսանյան, Դ. Սանդուխյան, Բ. Կասսարջյան)

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը տեղեկացրեց, որ հաջորդ սերնդի լայնաշերտ ցանցի (National broadband) նախագծման աշխատանքները մոտենում են ավարտին և հետևյալ փուլում են՝ ստացվել է տեխնիկական օժանդակություն հայեցակարգի մշակման համար, աշխատանքներ են տարվել գերմանական փորձագետների հետ, բազմաթիվ ֆորմատներով քննարկումներ են եղել, շուկայի մասնակիցները տեղեկացվել են և նույնիսկ գրավոր հրավիրվել մասնակցելու մրցույթին: ՀՀ վարչապետի կողմից ստեղծված հանձնաժողովը կազմել է հարցաշար բոլոր նրանց համար, ովքեր ներկայացնելով հայտեր, դիմել են ՀՀ կառավարությանը և հայտնել իրենց պատրաստակամությունը մասնակցելու ցանցի կառուցմանը: Հարցերի պատասխանների արդյունքում նախատեսվում է հաղթողի հետ ուղղակի բանակցությունների արդյունքում ստորագրել պայմանագիր ՀՀ հաջորդ սերնդի լայնաշերտ ցանցի (National broadband) կառուցման համար: Պահանջվում է որպեսզի հանրապետության մոտ 900 համայնքում ապահովվի 100 Մբ հզորությամբ ցանցի

հասանելիություն, և ցանցն սպասարկող ընկերությունը պետք է լինի մեծածախ շուկայի ներկայացուցիչ, որին արգելվելու է մատուցել մանրածախ ծառայություններ: Հստակ սահմանվելու են այդ մանրածախ ծառայությունները մատուցելու կանոնները: Ներկայացվելու են տեխնիկական պահանջներ, որոնք պետք է բավարարեն ինչպես լայնաշերտ ցանցին, այնպես էլ վերջին մղունի շահագործման համար առաջարկվող խնդիրներին: Ակնկալվում է մեկ ամսվա ընթացքում ավարտին հասցնել բանակցությունները և պոտենցիալ ներդրողի հետ ստորագրել պայմանագիր: Նախատեսվում է, որ ներդրման ծավալը կկազմի 60-100 մլն ԱՄՆ-ի դոլար՝ կախված բանակցությունների ընթացքում ձեռք բերված լուծումներից: Այնուհետև նաև մեկ անգամ առաջարկեց բոլոր շահագրգիռ կազմակերպություններին մեկշաբաթյա ժակետում ՀՀ կառավարություն ներկայացնել ՀՀ հաջորդ սերնդի լայնաշերտ ցանցի (National broadband) կառուցման հայտ, որտեղ հստակ կնշվեն ներդրումների չափը, աշխատանքների ծավալներն ու դրանց կատարման ժամկետները և այլ մանրամասներ:

Քննարկումներից հետո որոշվեց՝ առաջարկել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների ղեկավարներին մեկշաբաթյա ժակետում ՀՀ կառավարություն ներկայացնել ՀՀ հաջորդ սերնդի լայնաշերտ ցանցի (National broadband) կառուցման հայտ, որտեղ հստակ կնշվեն ներդրումների չափը, աշխատանքների ծավալներն ու դրանց կատարման ժամկետները և այլ մանրամասներ:

5. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի սեփականությունը հանդիսացող էլեկտրոնային հաղորդակցության մալուխների, գծավարերի և կապի ենթակառուցվածքների մաս կազմող այլ սարքավորումների հափշտակությունների, ինչպես նաև կապի կազմակերպման համար վարձակալական հիմունքներով պետական և համայնքային հողերի, շենքերի և շինությունների օգտագործման դեպքում առաջացող խնդիրների մասին

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան, Դ. Սանդուխյան, Վ. Դանիելյան)

«ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ-ի իրավաբանական տնօրինության տնօրեն Դ. Սանդուխյանը ներկայացրեց «ԱրմենՏել» ՓԲԸ-ի սեփականությունը հանդիսացող էլեկտրոնային հաղորդակցության մալուխների, գծավարերի և կապի ենթակառուցվածքների մաս կազմող այլ սարքավորումների հափշտակությունների մասին տեղեկատվություն, ինչպես նաև միջազգային փորձը նման երևույթների կանխման գործում:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ Ա. Սարգսյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել

վերլուծություն՝ ՀՀ-ում հասարակական նշանակության օբեկտներից գունավոր մետաղներից պատրաստված էլեկտրոնային հաղորդակցության մալուխների, գծալարերի և կապի ենթակառուցվածքների մաս կազմող այլ սարքավորումների հափշտակությունների դեպքերի վերաբերյալ և հետագայում ներկայացնել առաջարկությունների փաթեթ այդ երևույթները կանխելու համար՝ փաթեթում ներառելով նաև առաջարկություն ՀՀ-ում գունավոր մետաղների ընդունման և հանձման կետերի գործունեությունը կանոնակարգելու վերաբերյալ:

Այնուհետև «ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ-ի իրավաբանական տնօրինության տնօրեն Դ. Սանդուխյանը ներկայացրեց տեղեկատվություն՝ կապի կազմակերպման համար վարձակալական հիմունքներով պետական և համայնքային հողերի, շենքերի և շինությունների օգտագործման դեպքում առաջացող խնդիրների մասին:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ս. Դավթյանին՝ հստակեցնել ՀՀ կառավարության դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ և հաջորդ նիստում ներկայացնել ՏՏՁԱ խորհրդի անդամներին:

6. ՀՀ էլեկտրոնային կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան, Վ. Դանիելյանը, Ա. Քուչուկյան, Դ. Սանդուխյան)

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Դանիելյանը տեղեկացրեց, որ հարցը քննարկվել է ՏՏՁԱ խորհրդի համապատասխան աշխատանքային խմբերում: Խմբի անդամները եկել են այն եզրահանգման, որ, ունենալով էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգ, որտեղ հանգամանալից առանձին բաժնով խոսվում է էլեկտրոնային կառավարման խնդիրների մասին, և ներկայացված է գործողությունների իրականացման ժամանակացույց, նպատակահարմար չէ ընդունել մի նոր հայեցակարգ, որը կարող է շփոթության մեջ գցել հանրությանը: Ուստի, առաջարկվեց փաստաթուղթը հանել շրջանառությունից:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել առաջարկությունը և փաստաթուղթը հանել շրջանառությունից:

7. Հարևան երկրներում տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման տենդենցների մասին

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան, Կ. Վարդանյան, Հ. Մուսայելյան, Ա. Քուչուկյան, Հ. Ավոյան, Գ. Բարսեղյան, Հ. Խանջյան, Դ. Սարգսյան, Վ. Հովհաննիսյան, Դ. Սանդուխյան)

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանը ներկայացրեց տեղեկատվություն հարևան երկրներում ՏՏ արդյունաբերության զարգացմանն ուղղված քայլերի մասին և նշեց ՀՀ-ում ՏՏ հասարակության զարգացման հայեցակարգով նախատեսված ցուցանիշները, որոնք վերաբերում են ՏՏ արդյունաբերության զարգացմանը: Փաստեց, որ իրական ցուցանիշները զգալիորեն հետ են մնում մեր հայցակարգով նախատեսված ցուցանիշներից, և, որ անհրաժեշտություն կա գտնել զարգացման տեմպերն արագացնելու արդյունավետ միջոցներ:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ կազմակերպել հանդիպում՝ ներգրավելով ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչներին, քննարկելու համար ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգում նախատեսված կրթական խնդիրների իրականացմանը խոչընդոտող հարցերը և ներկայացնել առաջարկություններ:

8. ՀՀ-ում «էլեկտրոնային հասարակության ձևավորման» հայեցակարգի ժամանակացույցով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան)

«Երևանի մաթեմատիկական մեթենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Ա. Քուչուկյանը խոսեց ՀՀ-ում «էլեկտրոնային հասարակության ձևավորման» հայեցակարգի ժամանակացույցով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության բացակայության մասին: Առաջարկվեց, որպեսզի ներկայացվի տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ ՏՏԱ Խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել տեղեկանք ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգի ժամանակացույցով նախատեսված յուրաքանչյուր հարցի կատարման ընթացքի վերաբերյալ՝

1) ներառելով այն կետերը, որոնք չունեն ֆինանսավորման աղբյուրներ,

2) քննարկելով համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնել նոր ժամանակացույց՝ ներառելով տվյալ կետի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

9. ԱրմԹեք 2011 համաժողովի կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ

(Տ. Սարգսյան, Հ. Մուսայելյան, Վ. Դանիելյան, Ա. Գրիգորյան,)

«Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն Հ. Մուսայելյանը խոսեց ԱրմԹեք 2011 համաժողովի կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ և առաջարկեց հնարավորինս սեղմ ժամկետներում կայացնել որոշում՝ վերոնշյալ համաժողովի անցկացման վայրի վերաբերյալ:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, առաջարկեց որպեսզի «ԱրմԹեք 2011» համաժողովը տեղի ունենա Հայաստանի Հանրապետությունում՝ 2011 թվականի սեպտեմբեր ամսին:

Քննարկումներից հետո որոշվեց «ԱրմԹեք 2011» համաժողովն անցկացնել Հայաստանի Հանրապետությունում՝ 2011 թվականի սեպտեմբեր ամսին:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ
ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ
ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ